# ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» օրաթերթի հավելված

1991 թ. Մարտ։ № 18։ Գինը՝ 50 կոպ.



Երևան։ Օդանավակայանը։ Այստեղ մի քանի րոպեն մեկ ավելի վայրէջք բուժօգնության էին մեկնում ռազմական և քաղաքացիական ինքնաթիռներն ու ուղղաթիռներ։




Լենինական. փլատակների մաքրումը։



Սպիտակ։ Ուկրաինական շինարարները առաջին տների հիմքերը գցելիս։




Երևան. «Զվարթնոց» օդանավակայանը։ Դեկտեմբերի 12-ին ժամանած ֆրանսիացի փրկարարները։

## Օ Ր Վ Ա   Փ Ո Ս Տ Ի Ց

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Կովկասյան ճոռներից մինչև Բեռլին անցել եմ դիակների վրայով և արյան միջով: Սակայն իմ աչքերը չեն արցունքոտվել: Բայց երբ լսեցի, թե ինչ է տեղի ունեցել մեր հանրապետությունում, լաց եղա:

Հարգելի խմբագրություն, խնդրում եմ ձեր թերթի միջոցով Հայրենական պատերազմի հաշմանդամների և անձամբ իմ անունից շնորհակալություն հայտնել Ապարանի շրջանի երիտասարդությանը, որոնք առաջինն են ձեռք մեկնել, հասել տուժածներին օգնության:

ՌՈՒԲԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Հայրենական պատերազմի հաշմանդամ

... Զինվորական բժիշկ եմ՝ թոշակառու: Կարող եմ օգնել: Իմ հասցեն է՝ ԿՈՒՐՍԿ, ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱ № 111, բն. 91:

Ա. ՆՈՎՈՄԻՆՍԿԻ
(«Իզվեստիա» 9 դեկտեմբերի, 1988 թ.)

Մեր ժողովրդին խոր ցավակցություն ենք հայտնում երկրաշարժի հետևանքով ունեցած բազմաթիվ զոհերի կապակցությամբ: Այս ծանր պահին Իժևսկի մեխանիկական ինստիտուտի հայ ուսանողները ձեզ հետ են: Ցավում ենք, որ չենք կարող մասնակցել երկրաշարժի հետևանքների վերացմանը:

ԴԱՆԻԵԼՅԱՆ
Իժևսկի մեխանիկական ինստիտուտի ԷՀՄ-ի պետ

Հարգելի խմբագրություն, ձեր թերթի միջոցով մեր խորին ցավակցությունն ենք հայտնում երկրաշարժից զոհվածների հարազատներին ու մտերիմներին:

ԳԵՎՈՐԳՅԱՆ եղբայրներ,
ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐ
(Լենինգրադի մարզ, Կոլպինո)



Լուսանկարը՝ Հ. Կարապետյանի

# ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՐՀԱՎԻՐՔԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ





Լուսանկարները՝ Ս. Գույանի

## ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆ ՑԱՎ

ԹԲԻԼԻՍԻ, 8 դեկտեմբերի: (ՏԱՍՍ-ի թղթակից Լ. Գագուա): Այսօր Հայաստան մեկնեց վնասվածքաբանների, վերակենդանացնող բժիշկների, վիրաբույժների, բուժքույրերի բրիգադը՝ բրվով 40 մարդ: Վրաստանի վնասվածքաբանության կենտրոնի փորձառու բժիշկներին ընտրել է խորհրդային հայտնի վնասվածքաբան, լենինյան և պետական մրցանակների դափնեկիր Օթար Գուդուշաուրին: Նրանք համարյա բոլորն էլ վերջինիս աշակերտներն են: Նրա կլինիկան արդեն ընդունել է երկրաշարժի շրջաններից բերված առաջին վիրավորներին:

— Հիմնականում մանկաբույժներից կազմված երկրորդ բրիգադն է ուղարկվում Լենինական, Կիրովական և աղետի մյուս շրջանները,— ՏԱՍՍ-ի թղթակցին ասաց Վրացական ԽՍՀ առողջապահության նախարար Ի. Մենագարիշվիլին:— Երեկ աղետի շրջաններ մեկնեցին ավտոգնացքներ՝ բեռնված դեղորայքով, արյանը փոխարինող պրեպարատներով, արյան փոխներարկման մեկանգամյա օգտագործման համակարգերով: Հարյուրավոր դոնորներ՝ հանրապետությունում բնակվող ամենատարբեր ազգությունների մարդիկ, ցանկություն են հայտնել անհատույց արյուն տալ հայ եղբայրների համար: Բժիշկների երկու բրիգադներ են մեկնել Բոգդանովկա և Ախալցխա, Հայաստանի սահմանակից վրացական շրջանները, որոնց հիվանդանոցներ են բերվել արդեն ավելի քան 200 տուժածներ: 500 տեղ է պատրաստված Թբիլիսիի հիվանդանոցներում, 200 տեղ՝ Ռուսթավիի բուժհիմնարկներում:





ԿԱՐԻՆԵ ՆՈՐԱՅՐԻ

ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է 1957 թ. Ախուրյանի շրջանի Ղարիբջանյան գյուղում, բանվորի ընտանիքում: 8-ամյակը բարձր գնահատականներով ավարտելուց հետո կրթությունը շարունակեց Լենինականի Ղարիբջանյանի անվան միջնակարգ դպրոցում: 1974 թ. նույնպես բարձր գնահատականներով ավարտեց միջնակարգը: 1976-ին ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետ և 1981 թ. ավարտեց քնստիտուտը: Նույն թվականին աշխատանքի անցավ գուլպիդենի ա/մ-ում որպես ինժեներ-տնտեսագետ: Կարինեն ոսկե ձեռքեր ուներ և ճարտար երևակայություն: Այնպիսի զգեստներ էր կարում, որ մարդու ճաշակը չէր գալիս, թե ձեռքն է կարել, լավ անեղնագործում և գործում էր: Անցել է երկու տարի, բայց ընկերուհիները միշտ հիշում են նրա բարի ժպիտը ու լավ գործերը: Նրանց տուն մտնելիս, քեզ զգում էիր հեքիաթային աշխարհում: Նա իր ոսկե ձեռքերով խնամում ու բազմացնում էր շուրջ հարյուրից ավելի ծաղկատեսակներ ու կակտուսներ: Կարինեն այնքան բարի էր ու հոգատար, որ այդ չարագույժ պահին ժամանակ փրկեց իր ընկերուհուն, որն այդ ժամանակ հղի էր, իսկ ինքը հավերժ փակեց աչքերը՝ դեռ կյանքն առջևում...



ԳԱՐԵԳԻՆ (ԳԱՐԻԿ)

ԳԱՐՈՒՇԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

(Պատմում է կինը)

*Գարիկը ծնվել էր 1960-ին: Մասնագիտությամբ ռադիոտեխնիկ էր, շատ էր սիրում այդ գործը: Աշխատում էր վերլուծական սարքերի փորձնական գործարանում, մոնտաժող էր: Երազում էր մեր չորսամյա որդուն՝ Արթուրին, իր մասնագիտության գաղտնիքները փոխանցել: Սակայն ահավոր աղետը կտրեց նրա կանաչ կյանքի թելը, թերի թողեց բոլոր երազանքները:*

*...Այդ օրը աշխատավայրում էր: Երբ շենքը ցնցվեց, շատերի հետ վազեց դեպի ելք, դեպի աստիճաններ: Եղան մարդիկ, որ զգուշաբար հեռու մնալ խարխուլ կառուցած ու վթարային աստիճաններից, սակայն... ուշ էր: Հենց այդտեղ էլ նա կընքեց իր մահկանացուն:*

*Եթե աշխարհում հրաշք լիներ ու Գարիկը խոսեր, ապա երևի ասեր հետևյալը. «Ես՝ ծնողասեր մի որդի, ձեզ եմ թողել երկուսը: Մեկն ինձ նման՝ համեստ ու բարի, մյուսը՝ խոհեմ ու մարդասեր: Սիրեցեք ու փայփայեցեք իմ որբերին, նվիրվեք նրանց այնպես, ինչպես ես էի ձեզ նվիրված...»:*

ԱԼՎԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՄԿՐՏԻՉ ՀԱԿՈԲԻ

ՆԱԽՇՔԱՐՅԱՆ

Ծնվել է 1951 թվականին: Ավարտել է Հովհ. Թումանյանի անվան № 13 միջնակարգ դպրոցը: Դպրոցի համեստ սանը դարձել էր նույն կրթօջախի պարտաճանաչ և խստապահանջ ուսուցիչը: Դասավանդում էր կերպարվեստ: Անմնացորդ նվիրված էր մանկավարժի սուրբ գործին: Նրա տարերքը գույների և երանգների երազային աշխարհն էր: Արվեստի անխոնջ նվիրյալ էր և գեղեցիկի խենթարկու: Գեղարվեստի նրկատմամբ ունեցած ջերմ սերը կաթիլ առ կաթիլ սերմանում էր իր սաների հոգիներում: Մկրտիչը նաև գործվացութ ծնող էր և հոգատար ամուսին: Շատ անելիքներ ուներ, և անհանգիստ հոգին շտապում էր: Աշխատում էր ամեն ինչ շուտ վերջացնել. գուցե կանխազգո՞ւմ էր անհեռանկալելին: Անչափ տխուր էր կյանքի վերջին օրերին: Երազանքների և ստեղծագործական որոնումների կես ճանապարհին ընդհատվեց Մկրտիչի ջահել կյանքը: Նա իր ազնվությունն ու բարությունը, երազներն ու որոնող միտքը լիաբուռ շաղ տվեց իր սիրասուն որդիների հոգիներում: Եվ նրա երկու զավակները այսօր հպարտ ու վստահ քայլում են իրենց հայրիկի բացած ակոսներով...



ԾՈՎԻԿ ԱՂԱՍԻ

ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ծնվել է 1945 թվականին: Ավարտել է Ե. Չարենցի անվան № 25 միջնակարգ դպրոցը: Կրթությունը շարունակել է Երևանի Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների մանկավարժական ինստիտուտում: Ծովիկը Հովհ. Թումանյանի անվան № 13 միջնակարգ դպրոցի ֆրանսերենի ուսուցչուհի էր: Նրբանաշակ էր, բարեկիրթ՝ օժտված մանկավարժին հատուկ տակտով և վարվեցողությամբ: Սիրում էր մանուկների անհոգ աշխարհը, ներողամտությամբ էր վարվում սաների մանկական չարաճճիություններին: Սիրում էին նրան երեխաները: Ուսուցչուհին ամենուր շրջապատված էր աշակերտներով:

Սիրում էր իր զավակներին, մանկան նման ուրախանում նրանց փոքրիկ հաջողություններով: Նոր էր ամուսնացրել ավագ որդուն, շտապում էր կատարել ջահել տատիկի իր պարտականությունները, բայց առաջ կրծքին սեղմել առաջնեկ թոռնիկին, բայց չհասցրեց: Հանգավ չար ակնթարթում կարոտ կյանքին: Նրա հոգու արդար լույսով օրեցօր մեծանում է ու հասակ առնում այնքան երազած թոռնիկը...



*ՄԱՐԳԱՐ ԱԲՐԱՀԱՄԻ*

*ՄԵԼՔՈՆՅԱՆ*

*Մ. Մելքոնյանը ծնվել էր 1926-ին, թուրք ջարդարարներից մազապուրծ փրկված մշեցի հայ գաղթականի ընտանիքում: Պատանեկան հասակից աշխատել է Կումայրիի կենցաղսպասարկման ոլորտում: Նա հրմուտ վարսավիր էր: Սիրում էր իր աշխատանքը, միշտ կարգապահ, նվիրված իր գործին, վայելում էր թե՛ աշխատակիցների, թե՛ հաճախորդների համակրանքը: Ու աշխատանքի մեջ էլ: Տերյան և Հաղթանակի փողոցների բարձրահարկ շենքի առաջին հարկի վարսավիրանոցում զոհվեց աղետից վայրկյաններ անց: Երկրաշարժից մեկ օր առաջ տնեցիներին ասել էր. «Ամառը ծնվել եմ, ձմեռքին էլ կմեռնեմ: Ժամքը եկավ, Գյումրին ավերեց...»:*

*Տարօրինակ է, սակայն պարզվում է, որ չարաբաստիկ այն դեկտեմբերին իր մահկանացուն գուշակել էր ոչ միայն նա:*

*Բարի, հումորով և կյանքով լի մարդ էր վարպետ Մարգարը: Նրա հիշատակը երկար կապրի ինչպես հարազատների, այնպես էլ հարևանների, ծանոթների սրտերում:*



Լուսանկարները՝ Վ. ԽՈՏՈՎԻ

